

IV.

ԿԵՆՅԵՂ ԵՒ ԶԲԵՂՄՈՒՆՔ

Բոշան եթէ ոչ լիովին, գոնէ մեծ մասամբ աստանդական կեանք է վարում: Այդ մասին մենք ասել ենք բոլորը: Իր աստանդական հեանքի միակ ընկեր անասունը էշն է, որի վրայ նա մեծ հոգ է տանում և որին երբէք չէ ծեծում: Ապրելով դարերից ի վեր երկրագործ ժողովրդի մէջ, նա մինչև այսօր մի անգամ իսկ չէ մտածել արօրի ձեռք զարնել: Նրա միակ զբաղմունքն է մաղ, քթոց, սէլէ և այլն շինել. հնամաշ մագերն ու քթոցները նարդեալ, տեղ տեղ էլ աշրղութեամբ է զբաղում, դարբնութեամբ և երբեմն անասնաբոյժ է:

Մաղ գործելու գործիքը քառակուսի, մի արշին մեծութեամբ շրջանակ է, որի վերի ծայրը կոթնեցնում է գետնի մէջ ցցուած փայտին, ներքին ծայրը զնում ծնկների վրայ: Յետոյ, ձիու պոչի մագը չորս-չորս փունջ արած՝ պարզում է շրջանակի վերից մինչև ցած՝ իբր հինուածք, իսկ երկաթէ փոքրիկ կարթով երկու-երկու մագ անց է կացնում լայնութեամբ նրանց արանքով, ամբացնում որքան որ մաղի ծակերը ուզում է լայն կամ նեղ ունենալ և այդպիսով հիւսում մաղի ցանցը՝ երբեմն սև՝ երբեմն գոլնգոլն *): Հիւ-

*) Մաղերը լինում են զանազան տեսակի. փոկէ մաղ՝ կաշիի թելերից հիւսուած, մաղէ մաղ և ձարէ-մաղ՝ պղնձէ նուրբ թելերից պատրաստած, այս վերջինի հիւսուածքը պատրաստ գնում են նրանք:

սաւածքը մի անգամ պատրաստ՝ իր ուղած մեծութեամբ, քաշում է դասնադի (կլոր շրջանակի) վրայ և ծայրերը գամում, որից լետոյ կիսովին այդ գամերի և փոքր ինչ հիւսուածքի վրայ դնում է թրջած ու մաքրած կաշի և վերին ծայրերից փայտեայ գամերով ամրացնում դասնադի վրայ: Մաղը պատրաստ է այժմ ծախելու: Մի բոշա օրական կարող է 6 — 8 մեծ մաղեր շինել և եթէ մաղը ամենապակաս ծախուի հատը 20 կ. ուրեմն նա աշխատում է 1,20 — 1,60, որ քիչ չէ: Սակայն մաղերը միշտ չեն տրւում փողի գիմաց և աւելի եկամուտ են բերում, երբ բոշա կինը նրանց գիւղերն է տանում և գիւղացոց տալով՝ տեղը պաշարեղէն է առնում: Ինչի հետ որ ուզենաս, բոշան կը փոխի իր մաղն ու քթոցը, սէլէն կամ խոզանակը:

Կողովի գործելը լայտնի է: Դրա համար ընկերանում են մի քանի բոշա տղամարդիկ, գնում են սւռի ձիւղեր բերելու, ընկերովի մաքրում տերևներից, լետոյ հաւասար բաժանում և ամէն ոք իր տանը նստած ձմեռները՝ ապրանք են պատրաստում գարնան համար:

Երբ դադարում է թափառելը և ձմեռը վրայ է հասնում, ամէն կողմից խորճիթներն են ժողովում ցրուած բոշաները և սկսում փայելել աշխատանքի արդիւնքը մի կողմից էլ պատրաստելով ապրանք. կինը այստեղ և այս ժամանակ միմիայն մտնում է իր տանտիկնական դերի մէջ և ցոյց է տալիս, որ նույնքան մեծ ձայն ու իշխանութիւն ունի ներքին տնտեսական գործերում, որքան և ասւտրական խնդիրներում: Տղամարդի գործն է միայն նստել ուտել և երբ քէֆը կուզենայ՝ մաղ ու քթոց հիւսել: Զմեռուայ երեկոները տղամարդիկ հաւաքւում են նրա տանը, ով մեծ գոմ ունի և այնտեղ խօսում զանազան խնդիրների մասին. ամէն ոք պատմում է ամառուայ իր արկածները, տեսածները. լետոյ օղի են խմում, երգում և յաճախ կռիւներ սարքում, որը երբեմն վերջանում է ծեծով և աթոռակալի միջամտութիւնն է, որ դադարեցնում է այդ տեսակ զարտուղութիւններ: Կանայք իրենց

կողմից նայնալէս հաւաքում են և նրանց խօսակցութիւնը շատ աւելի հետաքրքիր է, որովհետեւ իւրաքանչիւրը սլաւոմում է իր թարմ տալաւորութիւնները թափառելուց բերած:

Բ. ԲՈՇԱՆԵՐԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԻՑ

Հայ բոշան առհասարակ մեծ ընդունակութիւն է ցոյց տալիս ամէն տեսակ միջավայրի մէջ շուտով յարդարելու հանգիստ կեանք. ոչ մի խոչընդոտ նրան չէ ընկճում և նա երբէք չէ կորցնում իր ինքնատիպութիւնը, որքան որ ընդունի տեղական կրօնը և բարքերից շատերը: Նա կատարելապէս սովորում է տեղական լեզուն, ծանօթանում է մարդկանց և սովորութիւնների հետ, առերևոյթս հպատակում տեղական բոլոր օրէնքներին — բայց այդ բոլորը՝ միմիայն շահագործելու նպատակով. քրիստոնեայ դարձած՝ նա առերևոյթս գործադրում է ծէսերը, ջերմեռանդ է ցոյց տալիս իրեն, բայց յաճախ, գոնէ գաղտնապէս, լիովին հակառակ է գնում եկեղեցական հիմնական օրէնքներին: Եւ եթէ ու է անդիմադրելի հալածանք կամ արգելք տեսաւ ու անհնար դատեց այդ շրջանում ապրել, նրա կէս նստական կեանքումն իսկ խրճիթի կահ կարասիքը այնպէս է կազմուած ու դարսած ամէն բան տոսրակներում, որ մի ժամուայ ընթացքում ամէն ինչ կարող է բառնալ իր էջի վըրայ, շալակել և անհետանալ երկրից, առանց մի խիլ իսկ թողնելու կամ ծախսելու:

Ամէն կլիմա, ամէն երկիր, դաշտ կամ ձոր, լեռ կամ անտառ՝ նա իր հայրենիքն է համարում. սեփականութեան վրայ գաղափար չունի: Զմեռը մի որջի, մի ծակի մէջ կիտուած, ամառը բաց օդի մէջ — նա միևնույնն է, միշտ աննկուն, անհոգ, գոհ իր ունեցածովը և հպարտ՝ իր կիսամերկութեան ու չքաւորութեան մէջ:

Բոշա կինը շատ տարբերում է իր ազգակից չինգէնէ

կամ ցիգան կանանցից հազուստով, մաքրութեամբ, ամօթ-խածութեամբ: Նա չէ գուշակում, թուղթ չէ բաց անում, չէ պարում իր շահագործութեան աղբիւր գործածելու համար դրանք: Այգ բաները քրիստոնէութիւն ընդունելուց ի վեր՝ նա թողել է: Նրանց նորահարսը երեսն է ծածկում և չէ խօսում օտարների հետ: Եւ եթէ բոշա կինը թափաօելու գաւազանը ձեռք առնելուց լետոյ դառնում է համարձակ, լիտի և անվայել խօսքերով սրախօսութիւններ է անում կամ հայհոյում, սակայն վայ նրան ով կամենայ նրա սլառուին ու է արատ բերել:

Բոշա կինը գող չէ. նա երբէք չէ գողանում. բոշա տղամարդը երբեմն՝ այն էլ եթէ մի ձիու վրայ այնպիսի լաւ պոչ տեսնէ, որի մագերը յարմար համարի մաղի համար *): Բայց ընդհանրապէս բոշան գող չէ և ոչ մի անից նա, եթէ դուռն իսկ բաց տեսնէ, բան չէ թուցնում: Սակայն երևի մի ժամանակ գողութիւնը նրանց մէջ ամօթ չէ համարուելիս եղել, որովհետեւ հայ ժողովուրդը մինչև այժմ էլ նրանց գող է համարում և երբ մի բոշա է տուն մտնում, աչալըջութեամբ հսկում են, որ բան չգողանայ: Յայտնի է նաև բոշայի շիտակութիւնը փոխառութեան ժամանակ. առանց ստորագրութեան, առանց վկայի փոխ է վերցնում և վերադարձնում, փոխ է տալիս և վստահում. իսկ տոկոս վերցնելուց սաստիկ խուսափում է: Վախենում է նաև երգումից և եթէ երգուեց, երբէք չէ ստում և երգումը կատարում է անպայման, թէկուզ իրեն վնաս լինի:

«Իրաւ է, ասում է պր. Պատկանեանը — բոշաները ունին վատ կողմեր էլ, սակայն շատ ունին ազնիւ յատկութիւններ: Բոշան ստել զիտէ, բայց տոկոս վերցնել՝ երբէք **):

Այս բոլոր յատկութիւններովը հանգերձ, չկայ աւելի անհատական, եսական մարդ քան բոշան՝ վերաբերութեամբ

*) Տես Գ. Վանցեան «Հայ բոշաներ» Մուրճ, 1892 № 7, 8 և 9:

***) Паткановъ. «Ильганы»:

դէպի այլազգիները և չկայ աւելի ընկերասէր, միաբան՝ դէպի իր ազգակիցները. ո՛չ մի բոշա անօթի չէ, լինի նա որք, լինի այրի, լինի պակասաւոր. բոշա հասարակութիւնը հոգում է նրանց մասին, տալիս է նրանց, պահպանում է, որդեգրում և այլն: Իսկ դէպի այլազգիները նա չգիտէ ոչինչ անել. մի խիլ իսկ ձրի չի տալ, չի օգնիլ ո՛չ մի դէպքում և ընդհակառակն ամէն կերպ կաշխատի նրանից մի բան պոկել, մի բան շահել: «Ինչ դրութեան մէջ որ լինի, նա միշտ շարունակում է իր գուտ անհատական կեանքը: Մեծ մասամբ թափառող, յաճախ անօթութեան դէմ կռուող, եթէ ոչ բախտաւոր, գոնէ ազատ է և արհամարհող կեանքի անպատեհութիւնները» *):

«Բոշան ապրում է օրը օրի և միշտ արհամարհանօք է վերաբերւում դէպի շրջապատող ազգերը: «Պէտք է» խօսքը նա չունի, իսկ «ունենալ» բայը ունեցել են (դարել, téra va) բայց մոռացուած է գոնէ եւրոպական ցիգաններից» **): Այդպէս էլ է հայ-բոշան, ինչ որ ինքը ունի՝ իր ազգակից չունեցողին է. երբէք միմեանց մերժել, «չունիմ» ասել չգիտեն. նրա դուռը բաց է, նրա հաւաքածը դրուած է իւրաքանչիւր ազգակցի առաջ օգտուելու, երբ պէտք ունի:

Բոշան ուսման սէր չունի. մասով կարելի է ցոյց տալ այնպիսիների, որոնք հէնց որ հայ դպրոցներում ուսել են, իսկոյն զատուել են բոշաներից, թողել նրանց ամէն սովորութիւնները և հայերի մէջ մտնելով՝ հաստատաբնակ կեանք վարել: Այդպիսիները խորշում են «բոշա» կոչուելուց իսկ և մի տեսակ զգուանք են շարժում, երբ խօսում են իրենց ազգակիցների դէմ, ծաղրելով կամ ծաղու առարկայ շինելով նրանց շատ լաւ յատկութիւնները, լեզուն և բնաւորութիւնը:

Սակայն գիտենք դէպքեր, որ բոշան սիրով լսում է

*) Adriano Colocci, Gli Zingari.

***) Նոյն տեղը:

երբ կարգուժ կեն իրեն հասկանալի բաներ: Ալէքսանդրօպօ-
լուժ իմ հետազօտութիւնների ժամանակ երբ հարցեր էի
տալիս, մի բոշա յանկարծ ասաց ինձ. «Ուզո՞ւմ ես մեր մա-
սին իմանալ, կարդա «Խաթ-Սաբա» գիրքը, այնտեղ բոլորը
ճիշտ գրած է» *): Գուրս եկաւ, որ բոշաները գիտէին ո՛չ
միայն այդ, այլ և «Սանթո» վէպի, պ. Ե. Լալայեանի, պ.
Վանցեանի գրուածների մասին:



*) «Խաթ-Սաբա» և «Սանթո» երկու վէպեր հայ բոշաների կեանքից, հեղինակութիւն Վ. Փափաղեանի: